

# ԿՐՈՆԱ-ԵԿԵՂ ԵՑԱԿԱՆ

Տ. ԱԴԱՄ ԲԱՆԱՆԱ ՄԱԿԱՐՅԱՆ

## ՏԵՍԻՆԵՐ ԵՎ ՑՆՈՐՔՆԵՐ

### ԵՍ Ի ՏԵՍԻՆ ՆԱՃԱԽԵՑԻՑ, ԵՐԱԶՕՔ ԽՕՍԵՑԻՑ ԸՆԴ ՁԵԶ

Սուրբ Գրիգոր Տաթևացու «Ամատան հատորի» վեցերորդ քարոզը սկսվում է այս բնաբանով. «Ես ի տեսիլն հաճախեցից, երազօք խօսեցից ընդ ձեզ»։ Բնաբանի մեջ նշվում է, որ խոսքը վերցված է Ովսեի մարգարեությունից. «Նորին քարոզ վասն տեսլեան և երազոց. ի բանն Ովսեի որ ասէ. "Ես ի տեսիլն յաճախեցից. երազօք խօսեցից ընդ ձեզ"<sup>1</sup>»։ Սակայն Ովսեի մարգարեության մեջ չկան այս բառերը, այլ վերցված են Թվոց գրքից, որտեղ խոսքն ասվում է ոչ թե դերանվան երկրորդ դեմքի հոգնակի թվի՝ *ձեզ*-ի գործածումով, այլ եզակի *նա* դերանվան հոլովված ձևերի նշումով. «Եթե ձեզանից որևէ մեկը Տիրոջ մարգարե դառնա, Ես տեսիլքով կերևամ նրան և երազի մեջ կխոսեմ նրա հետ» (Թվոց ԺԲ 6)։ Այնուամենայնիվ, կարելի է ասել, որ այստեղ հոգնակիի իմաստ կա, որովհետև խոսվում է մարգարե դարձող յուրաքանչյուր մարդու մասին, որոնց հավաքականությունը հոգնակիի իմաստն է պարունակում։ Պետք է նշել, որ Ովսեի մարգարեության մեջ կա համապատասխան մի հատված, որի համարն է վկայակոչված Տաթևացու քարոզի բնաբանում։ Այն կարծես կրկնությունն է Աստծո խոսքի՝ ասված Ովսեի մարգարեությունից դարեր առաջ Մովսեսի և նրա պես մարգարեական հեղինակություն ունեցող ցանկացող նրա եղբոր ու քրոջ՝ Ահարոնի և Մարիամի հետ կապված դրվագում, որտեղ Աստված Մովսեսի բացառիկությունն ընդգծելով՝ բարկանում է Ահարոնի և Մարիամի վրա։ Հետաքրքիր զուգահեռությամբ Ովսեի մարգարեության մամնօրինակ հատվածը հանդիպում է մարգարեության նույնաթիվ 12-րդ գլխում. «Կխոսեմ մարգարեների հետ, կշատացնեմ տեսիլքները և մարգարեների միջոցով կներկայանամ» (10)։ Սակայն տեսիլքներով այցելելու կամ երևալու և երազներով խոսելու մասին Թվոց գրքի խոսքը նույնությամբ չի կարող լինել Ովսեի մարգարեությունից, քանի որ Ովսեի մարգարեությունում ընդհանրապես գործածված չէ *երազ* բառը, իսկ *տեսիլք* բառը հանդիպում է միայն մեկ տեղում՝ մարգարեության՝ տեսիլքների վերաբերող վերոնշյալ հատվածում։

Այս ամենից կարելի է երկու եզրակացություն անել. կամ քարոզի բնաբանում չի եղել Ովսեի անունը, և բնաբանը նախապես եղել է հետևյալ տեսքով՝ «Նորին քարոզ վասն տեսլեան և երազոց. ի բանն որ ասէ....» (Ովսեի զեղչումով, մարգարեի անունը զուցե հետո շփոթմամբ է նշվել), և կամ էլ Թվոց գրքի և Ովսեի համապատասխան խոսքերի իմաստային նմանության պատճառով սխալ չի համարվել Թվոց գրքի խոսքերը Ովսեի մարգարեությանը վերագրելը։

Սակայն այս դեպքում էլ մեկ այլ անհամապատասխանություն է առաջ գալիս։ Թվոց

---

<sup>1</sup> Գրիգոր Տաթևացի, Ամատան հատոր, փպեղալ յամի 1741 ի Կ. Պոլիս, վերափպեղալ ի փպարանի Սրբոց Յակոբեանց, Երուսաղեմ, 1988, էջ 45։

գրքի տվյալ հատվածի բայերը Աստվածաշնչի տարբեր թարգմանություններում հիմնականում ապառնի ժամանակի իմաստն են արտահայտում, մինչդեռ Ովսեի մարգարեության ժԲ 10-ի բայերը գրաբարում հանդիպում են անցյալ ժամանակով՝ *խօսեցայ, յաճախեցի*<sup>2</sup>, սակայն նաև ապառնիով՝ *խօսեցայց, յաճախեցից*<sup>3</sup>: Չնայած Աստվածաշնչի օրինակների գերակշռող մասում Ովսեի մարգարեության այս հատվածը անցյալով է ներկայացված, սակայն այլալեզու թարգմանություններում ևս հանդիպում են ապառնի ժամանակաձևի գործածումներ<sup>4</sup>:

Արևելահայերենում նույնպես մարգարեության սույն դրվագը ապառնիով է, ինչը նկատի ունենալով՝ հարմար է մարգարեության և Թվոց գրքի համապատասխան հատվածները նույնացնելը: Սակայն մարգարեության խնդրո առարկա հատվածի անցյալ ժամանակով ներկայացվելու դեպքում, որ առավել ճիշտ է թվում, արդեն տեղին չի լինում Թվոցի և Ովսեի մտքերի նույնացումը, քանի որ Թվոց գրքում ասվածը խոստումի իմաստ ունի, իսկ Ովսեի մարգարեության մեջ ակնարկվում են արդեն կատարված իրադարձությունները: Ովսեի մարգարեության մեջ տեսիլքներին վերաբերող խոսքին նախորդող համարում Աստված խոստում է տալիս իր ժողովրդին բնակեցնելու վրանների տակ, ինչպես տոն օրերին: Եվ հաջորդ՝ տեսիլքներին և մարգարեներին առնչվող համարը ապառնիով ներկայացնելը, ինչպես որ արևելահայերեն թարգմանության մեջ է, սույն հատվածը դարձնում է արդեն արված խոստման շարունակություն, որով և իմաստային փոփոխություն է կատարվում: Ովսեի մարգարեության մշյալ համարը բայի անցյալ ժամանակով արդեն ներկայացնում է Թվոց գրքում Մովսեսին վերաբերող վեճի առնչությամբ տրված խոստման իրականացումը, մինչդեռ արևելահայերենում Ովսեի ժԲ 10-ի ապառնի թարգմանությունը հնարավորություն չի տալիս մասն գուցահեռ և կապ անցկացնել Թվոցի խոստման և դրա կատարման ակնարկի հետ, քանզի Ովսեի մոտ ապառնի ժամանակով հանդես գալիս այն ներկայանում է որպես նույն խոստման կրկնությունը: Նույնպես էլ նաև Տաթևացու քարոզի բնաբանում Թվոցի ժԲ 6-ի մանությունը Ովսեի ժԲ 10-ին կատարված է բայերի ժամանակները ապառնիով ընկալելու արդյունքում: Մինչդեռ Ովսեի ժԲ 10-ը պետք է դիտվի որպես պատմական հայտարարություն այն մասին, թե ինչ է Աստված արել իր ժողովրդի համար. մշտապես օգնել է՝ իր մարգարեներին տրվող խոսքով և տեսիլքներով, որոնցում Նա հայտնի է դարձրել իր կամքը<sup>5</sup>: Նշենք, որ տարբերություններ կան նաև Թվոց գրքի ճիշտ հատվածի բայի ժամանակաձևերի առնչությամբ: Գրա-

<sup>2</sup> Աստվածաշունչ մատենան հին – Նոր Կրակարանաց, Հայաստանի Աստվածաշնչային ընկերություն, 1997:

<sup>3</sup> Աստվածաշունչ Նոց – Նորոց Կրակարանաց, նուստպի ումմն բանի Տեառն սպասատրի Ոսկանի Երևանեցոյ, յԱմստերդամ, ի թոտում Փրկչին 1666, իսկ Նայոց ՌՃԺԵ:

<sup>4</sup> Գիրք Աստվածաշունչ հին – Նոր Կրակարանաց, ըստ միաբան վաղեմի գրագրաց մերոց և յոյն բնագրաց, ի Վենետիկ, ի վան Մխիթարեանց ի Սուրբ Ղազար, 1860 – ՌՅԹ:

<sup>5</sup> *La Bible*, traduite du texte original par les membres du Rabbinate français; sous la direction Zadoc Kahn, Grand Rabbim, Paris, Librairie Colbo, 3 rue Richer, 5733, MCMLXXIII.

*Traduction œcuménique de la Bible*, édition intégrale, Ancien Testament, 1983.

<sup>5</sup> *The interpreter's Bible*, The Holy Scriptures in the King James and Revised Standard Versions with general articles and introduction, exegesis, exposition for each book of the Bible, in twelve volumes, volume VI, New York, Abingdon Press, Nashville, p. 701-702.

քարում և աշխարհաքարում բայերն արտահայտում են ապառնիի իմաստ, սակայն հանդիպում են նաև աստվածաշնչյան բնագրի այլալեզու թարգմանություններ, որոնցում բայերը ոչ թե անցյալ կամ ապառնի, այլ ներկա ժամանակով են հանդես գալիս<sup>6</sup>: Ներկա ժամանակի գործածումը ևս տրամաբանական է թվում, որովհետև համապատասխան է Ահարոնի և Մարիամի հարցին. «Միթե Տերը միայն Մովսեսի՞» հետ խոսեց, նա նաև մեզ հետ չխոսե՞ց» (ԺԲ 2), ինչը նշանակում է, որ Աստված ուրիշների հետ էլ խոսում էր, սակայն տեսիլքներով ու երազներով և ոչ թե դեմ առ դեմ և բացեիքաց, ինչպես Մովսեսի հետ (ԺԲ 8):

Սուրբ Գրիգոր Տաթևացին ինքն իր քարոզի մեջ միայն մեկ անգամ է մեջբերում Թվոց գրքի խոսքը դերանվան եզակի թվի երրորդ դեմքի փոխարեն հոգնակի երկրորդ դեմքի գործածմամբ, առանց նշելու Ովսե մարգարեի անունը<sup>7</sup>:

Այսպիսով, հիշյալ քարոզի բնաբանը չէր կարող լինել Ովսեի մարգարեությունից, այլ հատակորեն Թվոց գրքից է որոշ փոփոխմամբ, և Ովսեի մարգարեության սույն դրվագի բայերը թերևս նպատակահարմար պիտի լինեն արևելահայերենում գործածել ոչ թե ապառնիով, այլ ինչպես Աստվածաշնչի գերակշռող թարգմանություններում՝ անցյալ ժամանակով:

### ԱՍՏԾՈ ՏԵՍԻԼԸ ՏԵՄՆՈՒՄ Է ԲԱՅ ԱՉՔԵՐՈՎ

Իմաստային տարբերություններ կան նաև տեսիլքի վերաբերյալ Թվոց գրքի 24-րդ գլխի 4-րդ և 16-րդ համարների հայերեն թարգմանության և այլ լեզուներով թարգմանությունների միջև: Այս համարներում խոսքը Բաղասամի մարգարեության վերաբերյալ է, ով իր մասին ասում է. «Ես՝ ճշմարտատես այրս, որ Աստծու տեսիլը տեսավ քնի մեջ բաց աչքերով»: Այլ թարգմանություններում, ի տարբերություն հայերենի՝ զրաբար և արևելահայերեն, որևէ խոսք անգամ չկա քնի մեջ լինելու մասին, այլ դրա փոխարեն խոսվում է ընկնելու մասին. «Ով տեսնում է Ամենակարողի տեսիլքները, ընկնում է, բայց բաց են նրա աչքերը»<sup>8</sup>: Ռուսերենում բայերը ներկա ժամանակով են ի տարբերություն մյուս թարգմա-

<sup>6</sup> Библия, книги Священного Писания Ветхого и Нового Завета, издание Московской Патриархии, Москва, 1990.

Толковая Библия или комментарий на все книги Св. Писания Ветхого и Нового Завета, 1, Бытие – Притчи Соломона, Петербург, 1904-1907, с. 533.

The New Bible Commentary Revised, edited by D. Guthrie BD, MTH, PHD; lecturer in New Testament; London Bible College, J. A. Motyer MA, BD; principal of Trinity College, Bristol; consulting editors A. M. Stibbs MA; formerly Vice-Principal, Oak Hill Theological College, London; D. J. Wiseman OBE, MA, DLIT, FBA, FSA; professor of Assyriology, University of London; Inter-Varsity Press, p. 182.

Traduction œcuménique de la Bible, édition intégrale, Ancien Testament, 1983.

<sup>7</sup> Ամառան հարրը, էջ 46:

<sup>8</sup> Библия, книги Священного Писания Ветхого и Нового Завета, Юбилейное издание посвященное тысячелетию крещения Руси, издание Московской Патриархии, Москва, 1988.

Библия, книги Священного Писания Ветхого и Нового Завета, издание Московской Патриархии, Москва, 1990.

նությունների, որոնցում խոսքը երբեմն ոչ միայն ընկնելու մասին է, այլև հափշտակվածության (trance, extase), մեջ ընկնելու, կամ Աստծո առջև ընկնելու՝ երկրպագելու իմաստով<sup>9</sup>: Մինչդեռ զրաբարում և արևելահայերենում ընկնելը քնի մեջ ընկնելու՝ քնելու իմաստով են արտահայտել: Հետաքրքրական է, որ Աստվածաշնչի արևմտահայերեն օրինակները ավելի մեծ են այլ լեզուներով թարգմանություններին՝ խոսելով ոչ թե քնի մեջ լինելու, այլ ընկնելու կամ քնելու պես գետնին ընկնելու կամ վերացումի, այսինքն՝ մտահափշտակության մեջ ընկնելու մասին<sup>10</sup>: Աստվածաշնչյան մեկնությունը հենց այս իմաստով է բացատրում Թվոց գրքի այս համարը՝ մատնանշելով աստվածային հայտնությունների, տեսիլքների ժամանակ մարգարեների գետնին ընկնելու վերաբերյալ Սուրբ Գրոց վկայությունները (Եզեկ. Ա. 28, Դան. Ը. 17-18, Գործք Թ. 4, Հայտն. Ա. 17)<sup>11</sup>:

Թվոց գրքի այս հատվածում *ընկնել* բառը քնելու հետ չառնչելու դեպքում մարգարեի խոսքի խորը իմաստի ըմբռնումն ենք ունենում: Չնայած մարգարեն մարդկային թուլությամբ ենթակա է բարոյական անկման հնարավորության և մարգարեանալու վիճակում մտահափշտակության մեջ լինելով՝ ֆիզիկական խիստ թուլության, բայց նրա մտավոր աչքը չի դադարում Աստծո կամքը տեսնելուց<sup>12</sup>: Այստեղ նաև խոսքը ներքին աչքերի մասին է, որ բացված են դեպի Տերը<sup>13</sup>: Իսկ աչքերը բաց լինելու մասին նշումը շեշտում է զգոնությամբ ճշմարիտ տեսիլք տեսնելը առանց սթափ գիտակցությունը մթագնող արգելքների<sup>14</sup>:

## ԱՆՁ ԵՎ ՏԵՍԻԼՔՆԵՐ

Տեսիլքներով այցելելու Աստծո խոստման և տեսիլքի վերաբերյալ աստվածաշնչյան

<sup>9</sup> *La Sainte Bible*, traduite d'après les textes originaux hébreu et grec, nouvelle version second révisée avec les notes, références, glossaire et index, Alliance Biblique Universelle, 1999.

**Traduction œcuménique de la Bible.**

**The Holy Bible**, containing the Old and New Testaments in the authorized King James Version, consolidated Book Publishers, Chicago, 1973.

նույն՝ **A New Commentary on Holy Scripture**, including the apocrypha, edited by Charles Gore, Henry Leighton Goudge, Alfred Guillaume, London, Society for promoting Christian knowledge, Northumberland avenue, p. 140.

<sup>10</sup> **Աստվածաշունչ գիրք Տին – Նոր Կրակարանագ**, եբրայական և լատինական բնագիրներեն թարգմանում, Նիս Եօրք, ի պալարանի Աստվածաշունչի Ընկերության, 1859:

**Աստվածաշունչ գիրք Տին – Նոր Կրակարանագ**, եբրայական և լատինական բնագիրներեն թարգմանում, Վիեննա, Ամերիկեան Աստվածաշունչի Ընկերություն, 1957:

**Աստվածաշունչ մարեան Տին – Նոր Կրակարանների**, եբրայական և լատինական բնագիրներից թարգմանում, Նայասարանի Աստվածաշնչային Ընկերություն, 1999:

**Աստվածաշունչ գիրք Տին – Նոր Կրակարաններու**, եբրայերեն և լատինական բնագիրներեն թարգմանում, Լիբանանի Աստվածաշնչի Ընկերություն, Պեյրոթ, 2001:

<sup>11</sup> **A Commentary on the Holy Bible**, by various writers, edited by the Rev. J. R. Dummelow M. A. Queens' college, Cambridge, complete in one volume with general articles, New York, the Macmillan company, p. 115.

<sup>12</sup> **Толковая Библия**, 1, с. 565.

<sup>13</sup> **The interpreter's Bible**, volume II, p. 259.

<sup>14</sup> **The new Bible Commentary Revised**, p. 191.

մի քանի համարների քննարկումից հետո անդրադառնանք տեսիլքատեսության խնդիրներին:

Անձը հարաբերության միակ գոյութենական հնարավորությունն է, և անձ՝ *provspon* բառով մասնկատի ենք ունենում հարաբերակցված իրականությունը: Այս եզրի հարաբերակցական բնույթն արտահայտվել է դեռ մրա սկզբնական գործածության մեջ և պարզ երևում է հատկապես դրա ստուգաբանությամբ: *πρός* նախդիրը *ὡς* գոյականի հետ (սենական *ὥπρός*), որ նշակում է հայացք, աչք, տեսք, ընդգծում են *πρός-ωπὸν* բարդ հասկացությունը, որի իմաստն է՝ հայացքս ուղղում եմ ինչ-որ մեկին կամ ինչ-որ բանի, գտնվում եմ ինչ-որ բանի կամ մեկի դիմաց: Այսպիսով, այս բառը գործածվել է անմիջական հարաբերակցության սահմանման համար<sup>15</sup>: Զարմանալի չէ, որ քրիստոնեական աստվածաբանության մեջ *prosopon* բառով են արտահայտվում մեկ Աստվածության անձերը, որով շեշտվում է երեքանձնյա Աստվածության միջանձնական հարաբերակցությունը: *πρόσωπον* եզրը ներմուծվել է 4-րդ դարի աստվածաբանության գոյաբանական խնդրից հետո հունական աստվածաբանների կողմից, ավելի հստակ՝ Սուրբ Գրիգոր Նյուսացու կողմից<sup>16</sup>: Եվ արևելյան աստվածաբանության 5-րդ դարի պատմական կոնտեքստում արդեն կային հունարեն *hypostasis*, *prosopon* բառերը՝ համապատասխան լատիներեն *persona*-ին<sup>17</sup>, որը գոյաբանական հասկացություն է<sup>18</sup>:

Այսպիսով, մարդը մասն *πρόσωπον* է՝ հայացքն ուղղած ինչ-որ բանի կամ մեկի, և իր հայացքի առջև՝ քնած (երազում) թե հարթմնի, պատկերներ է տեսնում: Գիտական փորձերը, որ կայանում են հերմետիկ և ձայնամեկուսիչ սենյակում մարդուն որոշ ժամանակով հասարակությունից, իր սովորական կենցաղից միայնակեցությամբ հեռու պահելու մեջ, ցույց են տվել մարդու գիտակցության որոշ շեղումներ, մասնաշաղկապում ու տեսողական հալյուցիանցիաների, այսինքն՝ պատրանքածին ձայներ լսելու և աչքերի առջև պատրանքային պատկերներ տեսնելու անկանոնության առկայություն<sup>19</sup>: Մարդկային գիտակցությունը և զգացողությունները բոլորովին տարբեր կերպ են դրսևորվում անզամ մուլն տեղանքում լույսի և խավար մթության մեջ: Աստվածաշունչը ևս, նշելով աստվածային հայտնության տեսիլքային ձևերի մեջ ի հայտ գալու մասին, շեշտում է մասնաշաղկապված գիտակցությամբ ցնորական պատրանքների կամ Սուրբ Գրքի բառերով՝ սուտ մարգարեությունների և սուտ տեսիլքների մասին (Զաք. Ժ 2, Երեմ. ԺԴ 14, ԻԳ 16, Ողբ Երեմ. Բ 14, Եզեկ. ԺԳ 7, Մատթ. ԻԴ 24):

<sup>15</sup> **Христос Яннарас**, Избранное, Личность и эрос, Москва, Росспэн, 2005, с. 93.

<sup>16</sup> Նույն փեղում, էջ 101:

<sup>17</sup> «**The person of Jesus Christ in the decisions of the ecumenical councils**», a historical and doctrinal study with the relevant documents referring to the Christological relations of the Western, Eastern and Oriental Churches, by Methodios G. Fouyas Ph. D. (Manchester), Hon. D. D. (Edinburgh) Greek Orthodox Archbishop of Aksum, Central Printing Press, Addis Ababa, 1976, p. 151.

<sup>18</sup> MOWBRAYS LIBRARY OF THEOLOGY, «Jesus the Christ», **H. E. W. Turner**, Sometime Fellow of Lincoln College, Oxford; Canon of Durham; and van Mildert Professor of Divinity in the University of Durham, MOWBRAYS LONDON & OXFORD, 1976, p. 72.

<sup>19</sup> **The psychology of consciousness**, second edition, Robert E. Ornstein, the Langley Porter neuropsychiatric institute, the institute for the study of human knowledge, Harcourt Brace Jovanovich, Inc., 1977, p. 88.

Հոգեբանության մեջ, ի տարբերություն աստվածաբանության, երբեմն առավել մախրնություն է գործածել ողջ անհատականությանը վերաբերող, ավելի լայն իմաստ արտահայտող *անձնավորություն* (personality) եզրը, քան *անձը* (person)<sup>20</sup>: Կարելի է ասել, որ հոգեբանության մեջ անձնավորության հոմանիշ է մասնավորապես *էգո* եզրը: Ըստ որոշ հոգեբանների՝ էգոն ձևավորվում է երեխա-ծնող հարաբերություններից կամ մասնավորապես էրեխա-ծնող հարաբերություններից<sup>21</sup>: Էգոյից անբաժան է գերէգոն կամ գերեւը, որ քննադատության միջոցով առավել կատարելություն է պահանջում էգոյից: Գերեւը մուլտիպլ գերիշխում է էգոյի դատողությունների: Յուրաքանչյուր գիտակցական և ենթագիտակցական միտք կամ արարք, որ չի համաձայնեցվում գերեւի հետ, լարվածություն է ստեղծում, և եթե այդ լարվածությունը գիտակցական է դառնում, այն ընդունվում է որպես մեղքի զգացում<sup>22</sup>: Ցնորական տեսիլքները կամ հալյուցիանցիաները հաճախ էգոյի ծնողական մասի դրսևորումն են: Ասվածին որպես հիմնավորում է բերվում այն փաստը, որ ամենատարածված զգայախաբությունները՝ հալյուցիանցիաները, անպարկեշտ խոսքեր են կամ անպարկեշտության մեջ մեղադրանքներ, որ ծնողական արտահայտման ձևեր են<sup>23</sup>:

### ՑՆՈՐՔՆԵՐ

Ցնորքը առաջոք երևույթն է, կեղծ երևակայական կերպարանք<sup>24</sup>, որ մեծավ մասամբ կապ ունի մասնավորապես հետ: *Ցնորք* բառին հոմանիշ են *պատրանք*, *հալյուցիանցիա* բառերը, որոնց արտահայտած երևույթն է՝ զգայարանների սխալ, որով մարդ երևույթն ընդունում է իբրև իրականություն<sup>25</sup> կամ տեսնում, լսում, հոտոտում, շոշափում է մի բան, որ իրոք չկա<sup>26</sup>:

**Տեսիլքային հիվանդությունների տեսակներ.** - Լատին լեզուները մեկ բառ են օգտագործում՝ նշելու համար մտքի խանգարումը և դրա պատճառով ի հայտ եկած սխալ համոզմունքների ամբողջությունը: Սակայն անգլերենը և գերմաներենը, բացի լատիներեն

<sup>20</sup> Anne Anastasi, department of Psychology, Fordham University, §Psychological Testing!, fifth edition, Macmillan Publishing co., Inc., New York, Collier, Macmillan Publishers, London, 1982, p. 17.

Paul Foulquié, Psychologie, nouvelle édition revue et corrigée, Les éditions de l'école, 11, rue de Sèvres. Paris-VI<sup>e</sup>, p. 503.

<sup>21</sup> Эрик Берн, Исцеление души, трансакционный анализ психотерапии, пер. с англ. А. Брызберга, Екатеринбург, 2003, сс. 44-45.

Эрик Фромм, Здоровое общество, Догмат о Христе, издательство Трапизиткига, Москва, 2005, с. 185.

<sup>22</sup> Игумен Евмений, Пастырская помощь душевнобольным, с. 197.

<sup>23</sup> Эрик Берн, նշվ. աշխ., էջ 65:

Abbrégé de psychologie, par Jean Delay, Professeur de Clinique à la Faculté de Médecine de Paris, membre de l'Institut et de l'Académie de Médecine; Pierre Pichot, Professeur de Psychologie Médicale à la Faculté de Médecine de Paris; troisième édition (3<sup>e</sup> tirage), Masson & C<sup>ie</sup>, Éditeurs, 120, Boulevard Saint-Germain, Paris (VI<sup>e</sup>), 1971, p. 75.

<sup>24</sup> Հայերեն բացարձակ բառարան չորս հատորով, կազմեց ՍԳ. Մալխասեանց, իսկական անդամ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի, Հայկական ՍՍՌ Պետական հրատարակչություն, Երևան, 1944, հատոր չորրորդ, էջ 467:

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 73:

<sup>26</sup> Բացարձակ բառարան, հատոր երրորդ, էջ 12:

delirium եզրից, զործածում են dellusion և Wahn բառերը: Նաև տարբեր նշանակություն ունի ֆրանսերեն *délire* բառը<sup>27</sup>: Ըստ մեկ կարծիքի՝ ֆրանսերեն *délire* բառը հիվանդությանը վերաբերող բառիմաստի արտահայտման մեջ ավելի ճշգրտությամբ է համապատասխանում լատիներեն իր նախօրինակին, քան գերմանական և անգլոսաքսոնական լեզուների համապատասխան բառերը<sup>28</sup>: *Délire*-ի դեպքում տարբեր դրսևորումներով լսողական և տեսողական հալյուցիանցիաներ են լինում<sup>29</sup>:

Սովորաբար հալյուցիանցիաները տարբերում են հալյուցիանոզից: Հալյուցիանոզ (*hallucinose*) բառը հատուկ է ֆրանսիական բժշկության լեզվին: Այն իմաստային փոխադրումն է գերմաներեն *Halluzinose* եզրի<sup>30</sup>, որ նշանակում է պատրանքային զառանգանք, բանդազուշանք: Հալյուցիանոզի դեպքում, ի տարբերություն հալյուցիանցիայի, մարդն ունենում է պատրանքային տեսիլքներ՝ տեսնում առարկա կամ ձայն լսում, բայց անմիջապես ճանաչում է, որ այդ զգայական ընկալումն իրականությանը չի համապատասխանում: Իսկ հալյուցիանցիաները կարող են լինել պարզունակ՝ լույս, բզզոց և այլն, կամ բարդ՝ պերսոնաժներ, կենդանիներ, խոսքեր, երաժշտության հատվածներ<sup>31</sup>, որոնք անձի կողմից ընդունվում են իբրև իրականություն:

**Կեղծ տեսիլքների առաջացման պատճառներ.** - Կենտրոնական ներվային համակարգի խանգարումները ցնորքներով ուղեկցվող հոգեկան խանգարումներ են առաջացնում: Նաև ուղեղի նույնիսկ փոքր ուռուցքը, ուռուցքները կամ դրա արյունատար անոթների լայնացումը կամ գլխուղեղի կեղևային արյան շրջանառության բարդացումները, ինչպես նաև ալկոհոլի, դեղերի, թմրամիջոցների ազդեցությունը հալյուցիանցիաներ, ցնորքներ են առաջացնում<sup>32</sup>: Գլխուղեղի կեղևի ընկալման կենտրոնների էլեկտրական գրգռումը նկրովիրաբուժական միջամտությունների ընթացքում գրգռվող գոտիներին համապատասխան պարզ կամ բարդ հալյուցիանցիաներ են առաջացնում, որոնք հիմնականում հալյուցիանոզային բնույթ ունեն<sup>33</sup>: Սակայն պատրանքային տեսիլքներ ունեցող պսիխոզով, այդ թվում և շիզոֆրենիայով հիվանդների մոտ անատոմիական քննությունները շեղումներ չեն հայտնաբերել, և ցնորքների ի հայտ գալը մման մարդկանց մոտ երբեմն բացատրվում է ներվերի հորմոնների բիոքիմիկ խախտումով<sup>34</sup>:

Դեղամիջոցներից LSD-ն, L.S.D. 25-ը, մեսկալինը, պսիլոսիբինը, ինչպես նաև հաշիշը և որոշ այլ թմրադեղեր նորմալ անձանց մոտ հալյուցիանցիաներ են առաջացնում՝ պատ-

<sup>27</sup> *Unevers de la psychologie*, Le développement psychologique normal, La vie psychologique pathologique, avant-propos de Jean Hamburger membre de l'Académie des Sciences et de l'Académie Nationale de Médecine, membre de l'Institut, sous la direction de Yves Pélicier professeur à l'Université René-Descartes, médecin de l'hôpital Necker – Paris, éditions Lidis, Paris, tome III, p. 276.

<sup>28</sup> Նույն տեղում, էջ 276:

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 277, 280:

<sup>30</sup> *Abrégé de psychologie*, p. 73.

<sup>31</sup> Նույն տեղում:

<sup>32</sup> *Unevers de la psychologie*, tome III, p. 249.

*Abrégé de psychologie*, pp. 74, 75.

<sup>33</sup> *Abrégé de psychologie*, p. 74.

<sup>34</sup> *Univers de la psychologie*, tome III, p. 249.

նառելով զգայական ընկալման խանգարումներ<sup>35</sup>: Դարեր շարունակ հայուցիճոգեն՝ պատրանքածին բույսեր գործածվել են ամերիկյան հնդկացիների կողմից: Հայտնի են ացտեկների գուշակության սնկերը, որոնք պարունակում են պսիխոսիբին, որը նույնքան հզոր է, որքան մեսկալինը<sup>36</sup>: Հայուցիճոգեն բույսերից հայտնի է նաև peyotl-ը, որ ցնորական պատրանքներ առաջացնելու ընդունակ փոքր կակտուս է, և գործածվում է Մեքսիկայի շրջաններում ապրող հնդկացիների կողմից հեթանոսական ուխտագնացության ժամանակ<sup>37</sup>: Երբեմն նման դեղամիջոցներ գործածած անձանց մոտ հայուցիճացիաները հայտնվում են առանց դեղերի կամ թմրադեղերի նոր ընդունման<sup>38</sup>:

**Իրական և կեղծ միատիցիզմ.** - Խելագարությունը իրավաբանական տերմին է, որը բժշկական հաստատում չունի, չնայած շարունակվում է գործածվել բժշկության մեջ: Ավելի ճիշտ է խելագարին փսիխոտիկ անվանել<sup>39</sup>, այսինքն՝ հոգեկան որոշակի հիվանդություն ունեցող անձ: Հոգեկան հիվանդների մեջ կարելի է տարբերակել երկու խումբ՝ ներքին հիվանդներ և շիզոֆրենիկներ<sup>40</sup>:

Շիզոֆրենիան մտային հիվանդություն է, որը մասերի է բաժանում հոգեկան միությունը<sup>41</sup>: Շիզոֆրենիայի ժամանակ խախտվում է անձի ամբողջականությունը, հիվանդի մեջ թվացյալ կերպով ապրում են երկու կամ ավելի շատ թվով մարդիկ: Իր եսի բաժանումը տարբեր մասերի հիվանդն ի վիճակի չէ գիտակցելու<sup>42</sup>: Ի տարբերություն ուղեղի հետ կապված մտային խանգարումներ ունեցող անձանց՝ շիզոֆրենիկը լավ է կողմնորոշվում ժամանակի և տարածության մեջ, հիշողության ամրագրումները նորմալ են<sup>43</sup>: Այս հիվանդությունը հանդիպում է մարդկային բոլոր խմբերում, վնասում է երկրի բնակչության մեկ տոկոսին<sup>44</sup> կամ երկրի բնակչության մեջ յուրաքանչյուր հարյուրերորդ մարդը հիվանդ է շիզոֆրենիայով<sup>45</sup>: տառապելով նաև կեղծ տեսիլքատեսությամբ, ինչպես որ ուղեղի ֆունկցիաների խանգարում ունեցող մարդիկ: Որոշ հիվանդներ առասպելական, միատիկ, հետապնդման թեմաներով հայուցիճացիաներ են ունենում, և երբեմն հասնում են արդյունքի՝ մարդկանց համոզելու, որ իրենք ահավոր դավադրության առարկա են կամ որ Աստուծոց ընտրված են, տիրապետում են ֆանտաստիկ զորության և այլն: Ծատ աղանդներ, կրոնական խմբակցություններ հիմնվում են նման պատրանքային համոզ-

<sup>35</sup> *Univers de la psychologie*, tome III, pp. 244, 350.

*Abbrégé de psychologie*, pp. 67, 74.

*The psychology of consciousness*, pp. 89, 93, 94, 108.

<sup>36</sup> *Univers de la psychologie*, tome III, p. 350.

*The psychology of consciousness*, p. 94.

<sup>37</sup> *Univers de la psychologie*, Les œuvres et les clés de la vie psychique, tome IV, p. 417-418.

<sup>38</sup> *Univers de la psychologie*, tome III, p. 352.

<sup>39</sup> *Игumen Евмений*, նշվ. աշխ., էջ 205:

<sup>40</sup> *C. G. Jung*, Problèmes de l'âme moderne, préface du Docteur Roland Cahen, traduction par Yves Le Lay, Édition Buchet/Chastel, 18, rue de Conde 75006, Paris, p. 443.

<sup>41</sup> *Univers de la psychologie*, tome III, pp. 285, 286.

<sup>42</sup> *Игumen Евмений*, նշվ. աշխ., էջ 202-203:

<sup>43</sup> *Univers de la psychologie*, tome III, p. 277.

<sup>44</sup> Նույն փնդում, էջ 285.

<sup>45</sup> *Игumen Евмений*, նշվ. աշխ., էջ 159:

մունքների վրա<sup>46</sup>:

Հոգեբաններն զբաղվել են իրական խորհրդապաշտական ու հիվանդագին դրսևորումների և դրանց տարբերությունների ուսումնասիրմամբ: Երբեմն անհնար է տարբերել կրոնախորհրդապաշտական դրսևորումը հիվանդագին դրսևորումներից, և հալյուցիանագեն դեղերը նույնպես միասին վիճակներին համապատասխան վիճակներ են առաջացնում<sup>47</sup>: Պետք է նշել, որ հայտնի հոգեբան Ֆրեյդը իր «*Malaise dans la civilisation*» աշխատության մեջ հերքում է կրոնական որևէ զգացողության վավերական լինելը<sup>48</sup>: Հոգեվերլուծաբան Ժակ Լյոբան (Jacques Leuba) 1930-ին հրատարակեց «Կրոնական միաստիգիզմի հոգեբանությունը», որում համաձայն է Ֆրեյդի կարծիքին: Նրա համար խորհրդապաշտական սիմվոլիզմը անառարկելիորեն սեռական նշանակություն ունի: Միաստիգիզմի դառնում է փոխհատուցում սեռական հուսախաբության համար<sup>49</sup>: Սիմվոլիզմի հետ առնչված՝ վերոնշյալ բաժանումով հոգեկան հիվանդների երկու խմբերի հստակ տարբերության շեշտմամբ նշվում է, որ այդ երկու խմբերի հիվանդությունները, այնուամենայնիվ, մեկ ընդհանուր կետ ունեն՝ իրենց բովանդակության սիմվոլիզմը<sup>50</sup>: Նաև երազատեսության վերաբերյալ ուսումնասիրություններում մեծ ուշադրություն է դարձվում խորհրդանշանների, որոնք համարվում են երազների մասին տեսության մեջ ամենանշանակալի մասը<sup>51</sup>: Այսպես նաև աստվածաշնչյան Հոփսեփը, Դանիելը երազներում տեսնված խորհրդանշաններ, սիմվոլներ համարելով բացատրեցին, մեկնեցին երազները (Ծննդ. Խ 12-13, 18-19, ԽԱ, 26-27, Դան. Բ 39-43, Դ 17-24): Երազների վերաբերյալ նշվում է նաև, որ հաճախ դրանք արթմնի ժամանակ անձի չկատարված ցանկությունների իրականացումն են երազներում<sup>52</sup>: Սա նման է նաև միրածի երևույթին, որ դրսևորվում է ցանկության պատրանքային իրականացման մեջ: Բացատրական բառարանում *միրած* բառի բացատրության մեջ ևս հետևյալ օրինակն է բերվում: Անապատում տոթից և ծարավից նվաղող ուղևորը հանկարծ տեսնում է իր առաջ կանաչավետ և ջրառատ օազիս, որը, սակայն, ոչ թե իրականություն է, այլ տեսողական պատրանք<sup>53</sup>: Այս նկատառմամբ աշխարհահոգյակ փիլիսոփա Էմմանուել Կանտը գրել է. «Խելագարը քայլող երազատես է», և հալյուցիանացիաները որոշ հոգեբանների կողմից ևս երբեմն համարվում են արթմնի երազներ<sup>54</sup>: Տեսիլքների ի հայտ գալը նաև բացատրվում է որպես նման ապրումներ ունենալու խիստ ցանկության արդյունք<sup>55</sup>: Այսպիսով, իրական և կեղծ տեսիլքատեսության

<sup>46</sup> *Univers de la psychologie*, tome III, pp. 281-282.

<sup>47</sup> *Univers de la psychologie*, tome IV, p. 333.

<sup>48</sup> Նույն փեղում, էջ 334:

<sup>49</sup> Նույն փեղում:

<sup>50</sup> *C. G. Jung*, նշվ. աշխ., էջ 444.

<sup>51</sup> **Ֆ. Փրեյդ**, Психология бессознательного, Сборник произведений, составитель, научный редактор, автор вступительной статьи М. Г. Ярошевский, Москва, «Просвещение», 1989, с. 93.

<sup>52</sup> **Զիգմունդ Փրեյդ**, Толкование сновидений, репринтное воспроизведение 1913 года, Ереван, 1991, сс. 101, 108.

<sup>53</sup> **Բացատրական բառարան**, հափոր երրորդ, էջ 340, հափոր չորրորդ, էջ 73:

<sup>54</sup> The psychology of consciousness, p. 86.

*Abrégé de psychologie*, p. 75.

<sup>55</sup> **Игумен Евмений**, նշվ. աշխ., էջ 217-218:

դրսկորումները հար և մնան են իրար, սակայն ի տարբերություն վավերական տեսիլքների՝ կեղծ տեսիլքները կամ ցնորքները կարող են լինել անձի սուբյեկտիվ ցանկությունների խորհրդանշանային արտահայտություններ աշխարհի, մարդկանց, Եկեղեցու, եկեղեցականների հանդեպ կանխակալ կարծիքով, նախատրամադրվածությամբ: Եվ ցնորքներով ուղեկցվող հիվանդությունների պարագային նաև անձի ներաշխարհում առկա մշակութային ավանդույթները շատ բան են պայմանավորում<sup>56</sup>: Միմյուրե կրոնական միասնացիվի մեջ երկրորդական և մուլտիպլ ավելորդ է համարվում կանխակալ տրամադրվածությունը, անձի զգացական ընկալումները, քանի որ աստվածհայեցողության կամ եկեղեցական հեղինակների արտահայտմամբ աստվածային մեզի մեջ մտնելու համար անհրաժեշտ է հրաժարվել ամեն ինչից, սեփական անձից և ամեն ինչից անկախ լինելով՝ ճախրել դեպի աստվածայինը<sup>57</sup>: Պողոս և Պետրոս առաքյալներն իրենց տեսիլքային փորձառությունները բացատրել են հափշտակվածության մեջ լինելու իրողությամբ (Գործք ԺԱ 5, ԻԲ 17, Բ Կորնթ. ԺԲ 2-4):

#### **Ցնորքների դիվանականությունը և տեսիլքների վավերականացումը.**

Պողոս առաքյալը նշում է մարդ արարածի եռամաս լինելը՝ կազմված հոգուց, շնչից և մարմնից (Ա Թեառ. Ե 23): Գիտնական հոգեբաններն առավելաբար լինելով շնչավոր, այսինքն՝ դեռևս ոչ հոգևոր, իրենց հոգևորը բավականաչափ չզարգացրած մարդիկ, միշտ ուսումնասիրում են մարդկանց միայն շնչավոր, մարմնական տեսանկյունից<sup>58</sup>: Ցնորատեսության մարդկային վիճակի մասին հայտնի է, որ մնան պարագայում ուղեղը գործում է ցածր ճնշմամբ, և շիզոֆրենիայի կամ խրոնիկ մոլորականների դեպքում հալյուցիանցիաները հետևանք են գլխուղեղի կեղևի ընդունակության կորստի՝ զտելու և համակարգելու զգացական տեղեկությունները, խանգարում, որի ճշգրիտ ծագումը հայտնի չէ<sup>59</sup>: Եվ մինչև հոգեբանները մինչև այսօր դժվարանում են հստակորեն որոշել մնան խանգարումների պատճառները, այլ տեսանկյունից ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ցնորքներ, պատրանքներ առաջացնող հիվանդությունների պարագային հալյուցիանցիաները որոշ դեպքերում ուղեղի ֆունկցիաների խանգարման դրսկորում են, որոշ դեպքերում էլ՝

<sup>56</sup> *Univers de la psychologie*, tome III, p. 250.

<sup>57</sup> Նայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմի աստվածաբանական հանդես, Գանձասար Բ. (Աթենացիների Դիոնեսիոս Արիստագացի եպիսկոպոսի թուղթը եփեսացիների Տիմոթեոս եպիսկոպոսին խորհրդական աստվածաբանության մասին), էջ 145, 147-149:

*Scriptores Armeniaci*, tomus 17, The Armenian version of the works attributed to Dionysius the Areopagite, edited by Robert W. Thomson, LovanII, in Aedibus E. Peeters, 1987 (Դիոնիսի Արիստագացու եպիսկոպոսի Աթենացու առ Տիմոթեոս եպիսկոպոս Եփեսացու յաղագս խորհրդականի աստվածաբանութեան), էջ 225, 228-229:

**From glory to glory**, textes from Gregory of Nyssa's mystical writings, selected and with an introduction by Jean Daniélou, S. J., translated and edited by Herbert Musurillo, S. J., St. Vladimir's Seminary press, Crestwood, NY 10707-1699, 1995, p. 118.

Այս մասին րեւն նաև՝ *Мистическое богословие*, (Вл. Лосский, Очерк мистического богословия Восточной Церкви), издание христианской благотворительно-просветительской ассоциации, «Путь к истине», Киев – 1991, с. 116.

<sup>58</sup> *Игумен Евмений*, նշվ. աշխ., էջ 363:

<sup>59</sup> *Abrégé de psychologie*, p. 76.

*Univers de la psychologie*, tome III, p. 285.

դիվական ուժերի ազդեցության հետևանք<sup>60</sup>, ու մամն հիվանդության արմատները հաճախ գտնվում են ոչ թե հոգեկան, այլ հոգևոր մակարդակում<sup>61</sup>:

Ի հավելումն Հին Կտակարանում կեղծ տեսիլքների վերաբերյալ Աստծո մախազգուշացումների (Զաք. Ժ 2, Երեմ. ԺԴ 14, ԻԳ 16, Ողբ Երեմ. Բ 14, Եզեկ. ԺԳ 7), Նոր Կտակարանում մահ Բրիստոս Ինքն է զգուշացումներ անում (Մատթ. ԻԴ 24, Մարկ. ԺԳ 22), իսկ առաքյալը հստակորեն նշում է սատանայի՝ իբրև լուսո հրեշտակ կերպարանավորման մասին (Բ Կորնթ. ԺԱ, 14): Եկեղեցու դավանանքը, որ արտահայտում է աստվածային հայտնության ճշմարտությունը, ազդում է մարդու մտքի, նրա ներքին վերափոխման վրա, որով մարդն ընդունակ է լինում իրական խորհրդապաշտական փորձառության ձեռքբերման: Եկեղեցու կողմից պահպանվող ճշմարտությունից դուրս անձնական փորձառությունը զրկված կլինեք վավերականությունից, օբյեկտիվությունից, դա կլինեք ճշտի և ստի, իրականի և պատրանքայինի խառնուրդ, կլինեք միստիցիզմ այդ բառի վատթար իմաստով<sup>62</sup>: Այսպես մահ առաքյալները դեմ չարտահայտվեցին տեսիլքով Բրիստոսի հետ հաղորդակցված Պողոս առաքյալին՝ հավանություն տալով նրա գործունեությանը (Գաղ. Բ 6-10): Եվ աշխարհում բազում խառնաշփոթ ցնորքների ու տեսիլքների առկայությամբ այս իմաստով դժվարին իրավիճակներում այսօր Եկեղեցին է միակ բարձրագույն աստվածադիր հեղինակությունը՝ զատորոշելու հիվանդագին կամ դիվական ցնորքները աստվածային ներշնչումներից և վավերացնելու ճշմարտացիությունը իրական տեսիլքների:

<sup>60</sup> Игумен Евмений, նշվ. աշխ., էջ 237:

<sup>61</sup> Նույն տեղում, էջ 163:

<sup>62</sup> Вл. Лосский, նշվ. աշխ., էջ 98: